

## ՎԱՐՍԶԴՎԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՑԱՆ

(Ճարտարապետության քեկնածու,  
դոցենտ)

## ՄՑԽԵԹԱՆ ԵՎ ՆՐԱ ՊԱՏՄԱ-ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Յս անոմը նույնքան նվիրական  
է վրացիների համար, որքան Վա-  
ղարշապատ - էջմիածինը՝ հա-  
յերի: Հինավուրց այդ քաղաքը  
հանդիսացել է վրաց ժողովրդի  
պատմության կարևորագույն օրրաններից  
մեկը:

Մցխեթա անոմը ենթադրաբար կապվում  
է վրացական Մոսխի կամ Մեսխի կոչվող  
ցեղի անվան հետ, իսկ բնակավայրի առա-  
ջացման ժամանակը պարուղվում է պատ-  
մության մշուշով:

Պատմական և հնագիտական տվյալները,  
որոնք շափազանց առատ են Մցխեթայի վե-  
րաբերյալ, վկայում են նրա մեծ դերն ու  
նշանակությունը ոչ միայն Վրաստանի, այլև  
Դեռևս մեր թվագրությունից առաջ Մցխե-  
թան մարդաշատ բնակավայրը էր: Դառնա-  
գով (Բ. գ. թ. թ. ա.) Վիրքի (Իմբերիալի) թա-  
գավորության մայրաքաղաք, նա սկսեց  
բարգավաճել և զարգանալ, իսկ երբ Վրաս-  
տանուած Քրիստոնեությունը տարածվեց որ-  
պես պետական կրոն (337 թ.). Մցխեթան  
միաժամանակ հանդիսացավ նաև երկրի  
հոգեստը կենտրոնը: Իր այդ նշանակությունը  
նա պահպանեց նաև Զ դարից հետո, երբ  
երկրի վարչական կենտրոնը փոխադրվեց  
Քրիստուի:

Այսպիսով, Մցխեթան հանդիսացել է  
վրաց ժողովրդի պետականության և Վրա-  
ցական ծիեղեցու օրրանը, այն նշանավոր  
կենտրոններից մեկը, որտեղ կազմակերպ-  
վել է վրացական ազգային սշակույթը, մաս-  
նավորպես ճարտարապետությունը: Հիմ-  
նադրված լինելով Կուր և Արագվի գետերի  
խառնարանի մոտ տարածվող ընդարձակ  
հարթավայրի վրա, նա երիտ կողմից սահ-

մանագծվում է հիշատակված գետերով, ո-  
րոնք ցամաքի կողմից եղած պաշտպանա-  
կան կառուցվածքների հետ միասին կարե-  
վոր գեր էին կատարում քաղաքի անափի-  
կությունն ապահովելու գործում:

Մցխեթան հանդիսացել է առևտրական  
ճանապարհների աշքի ընկնող հանգուցա-  
կետ և դեռևս շատ հնուց ընդունված էր մի-  
ջազգային առևտրավայր: Բացի զուտ տնտե-  
սական նշանակությունից, Մցխեթայով  
անցնող գիւղավոր ճանապարհը, որը պահ-  
պանել է իր նշանակությունը նաև այժմ և  
կոչվում է ռազմավիրական ճանապարհ,  
ուներ ռազմավարական շափաղանց կարևոր  
նշանակությունը վրաց ժողովրդի կյանքում:  
ամբողջ Անդրկովկասի համար:

Ճագիտական պեղուաներն ու տւուանա-  
սիրությունները պատմական Մցխեթայի  
շրջակայիքում և նրա արվարձաններում, ո-  
րոնք զգալի ծավալ ատացան հատկապես  
վերջին 10—15 տարիների ընթացքում, շա-  
փազանց հարուստ նյութեր դնձեսեցին  
վրաց ժողովրդի պատմության, առհետունե-  
րի, արվեստների ու ճարտարապետության  
մերաբերյալ:

Մասնավորապես խիստ հետաքրքիր են  
Արմագիի և Բագինեթի պեղուաները: Ար-  
մագին (որը գտնվում էր Կուր գետի աջ ա-  
փին, այժմյան Մցխեթա կայարանի մոտ),  
հանգիստացել է Վրաստանի հին մայրաքա-  
ղաքը, իսկ հետագայում՝ կարևոր ռազմա-  
վարական հենակետ Մցխեթայից գետի հա-  
րավը: Նրա անտունը հանդիպում է վրացա-  
կան, հայկական և անտիկ պատմական աղ-  
բարձրներում նաև որպես հեթանոսական  
սրբատեղի: Դեռևս 1867 թվականին այս-  
ուղղ դժունի է մեր թվադրության 75 թվա-

կանին վերաբերող մի հոմարեն արձանագրություն: Նրանում հիշատակված են տեղի կություններ հոռածեցիների կողմից պարփակելու վերաբերյալ:

Հնագիտական պեղումները, որոնք այս տեղ սկսվել են 1937 թվականից, հայտնաբերել են հեթանոսական տաճարի, միջնաբերդի պարիսպների ու բուրգերի մնացորդներ: Վրաստանի և Անդրկովկասի հնագիտության պատմության համար առանձնապես արժեքավոր են միջնաբերդից ներքե, Կուր գմտի ափին հայտնաբերված վրացական բղեշխներին պատկանող զամբարանները: Սրանցից հանված զենքերը, զրամները, զարդերը և գեղարվեստական այլ իրերը, որոնց վրա ակներեւ է հոմա-հոռմական մշակույթի բարերար ազդեցությունը, վկայում են ստրկատիրական շրջանի Վրաստանում նյութական մշակույթի բարձր մակարդակի մասին:

Նույն վայրում պեղված թագինեթի կոչվող միջնաբերդը իր կասուցվածքներով և զամբարանային իրերով վերաբերում է մեր թվագրությունից առաջ Դ դարին, վկայում է շինարարական արվեստի և ճարտարագետության բարձր մակարդակի մասին և հարուստ լուս է սփռում Վրաստանի հնագույն շրջանի պատմության վրա:

Մցխեթայի Կաթոլորագույն հնավայրերից է նաև Սամթավրոյի ընդարձակ գերեզմանատամը: Այն տարածվում է քաղաքից դեպի հյուսիս, Սամթավրոյի վանքի շրջակայքում, ուղղմամիջական ճանապարհի ուղղությամբ: Այստեղ գենու 1869 թվականին պատահականորեն բացվեցին հին դամբարաններ, որոնք իրենց վրա գրավեցին պիտուականների ուշադրությունը: Սամթավրոյի զամբարանները առաջին անգամ պեղման և նիմիկ վեցին 1871—1875 թվականներին հնագիտ Ֆ. Բայերնի կողմից, իսկ սկսված 1938 թվականից պեղումները սիստեմատիկ բնույթ ստացան: Պեղված և ուսումնասիրված մեծ թվով դամբարանները, որոնք վերաբերում են պատմական շափականց ընդարձակ մի ժամանակաշրջանի՝ մեր թվագրությունից առաջ Բ հազարամյակից մինչև մեր թվագրության թ դարը, ուշագրավ են թաղման բազմազան տեսակներով և դամբարանային խիստ հարուստ նյութերով:


Մցխեթան և նրա շրջակայքը առանձնապես հարուստ են վրացական ճարտարապետության աշխի ընկնող հուշարձաններով: Արագի գետի աջ ափին, սարի բարձր գագաթին վեր է խոյանում Զվարիի (Ս. Խաչի) տաճարը: Վրացական ճարտարապետության անլուգական այս գործարք, որը կանգնիցված է զարի սկզբին, իր կուտո-



ՍԱՄԹԱՎՐՈՅԻ ՏԱԿԱՐԸ (ԺԱ. Դ.)

վլցին-տարածական լուծմամբ հանդիսանում է վրացական կենտրոնագրեթ խաչաձև տաճարների լավագույն նմուշը և հարուստ է հայկական նույնատեր (Ավանի, Ս. Հոփիսիանիի և այլ տաճարների): Կատուցվածքներին: Հայկական և վրացական այս կառուցվածքներով հիանալիորեն մարմնավորվել ե ստեղծագործական այն ընդհանությունը, որ հատուկ է եղել երկու եղբայր ժողովուրդների պատմական ճարտարապետությանը:

Այդ ընդհանուրությունը, բացի մի շաբթ պատճառներից, գոյնում է իր բացատրությունը նաև այն սերտ կապերով, որինք գոյություն ունենին Հալ և Վրաց Եկեղեցիների միջև քրիստոնեությունն ընդունելու սկզբնական շրջանում: Այդ առթիվ հայկական և վրացական պատմական աղբյուրներում պահպանվել են բազմաթիվ վկայություններ: Ավելորդ շեր լինի այստեղ մեջբերել այդպիսի վկայություններից մեկը՝ մի կտոր Արքահամ կաթողիկոսի նամակից՝ տվյալած վրաց կաթողիկոս Կյուրիկին: Նամակում ի միջի այլոց ասված է, «...Միաւորութիւն հաւատույ և զամանջականնութիւն զերկոցուց աշխարհաց Ցուրտաւայ եկե-



ՍՎԵՏԻ ՅԱՆՈՎԵԼԻ ՏԱՋԱՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ  
(բառ պրոֆ. Ն. Ակերովի)

ղեցին անշա՞րժ միջնորդութեամբ պահէր, ուստի սէր և խնամութիւնք մարմնաւորականք և հաղորդութիւնք հոգևորականք կատարէին ցնծալից որպախությամբ։ Աստի ի Մծխիթայի ի խաչն զալով և այտի ի Սուրբ Էարողիկէ»<sup>1</sup> (ընդուռմը մերն է—Վ. Հ.): Մեզքերմած վկայության վերջին մասից երկուամ է, որ հայ հավատացյալների համար Մշխիթայի Ս. Խաչը հանդիսանուած էր նույնչափ նվիրական արքատեղի, որքան Ս. Էջմիածինը՝ վրացիների համար։

Զվարիի տաճարի տարածական հարուստ ուրվանկարը հարազատուրեն կապվուամ է սարի ուրվանկարի հետ, կարծես բիելով նրանից ու պսակելով նրան, իշխուած է Կուր

և Արագվի գետերի ընդարձակ հովտի համարապատկերում։ Զվարիի տաճարը ճարտարապետական իր բարձր արժանիքների հետ միասին, հանդիսանուած է այն եղակի հուշարձաններից մեկը, որի կառուցողները այդքան մեծ վարպետությամբ նշանավորել են բնության և ճարտարապետության կապը, անժամացնելով և՛ իրենց և՛ սեփական ժողովրդին։

Ուշագրավ հուշարձաններից է նաև Սամբավրոյի տաճարը (ԺԱ դ.): Նա զոնվում է Մշխիթայի Հոգածային ծալրամասում և բոլոր կողմերից շրջապատված է պարիսպներով։ Բակի կենտրոնում վեր է խոյանում տաճարն իր բարեկեց ծալվաներով ու ճարտարապետական նուրբ գրվագներով։ Սամբավրոյի տաճարը արտահայտուած է գեղարվեստական այն ձգութանութերը, որոնք բնորոշ էին հասուն միջնադարի վրացական ճարտարապետությանը։ Ճակատների պլաստիկական հարուստ մշակումը բարակ սյուների վրա հենավող դեկորատիվ կամարաշարերի և զարդարանդավների միջոցով ԺԱ դարից սկսած դառնում է վրացական, ինչպես նաև հայկական ճարտարապետության արտահայտչական հիմնական և շատ տարածված մուտքով։ Խուճի կարգի ճարտարապետական զուծումը կարելի է տեսնել Անիի Մայր Տաճարի, Յարմաշենի, Սանանի գիւղավոր եկեղեցու և Հայաստանի ԺԱ դարից մի՛ շարք ուրիշ հուշարձանների պահին վրա։

Մշխիթայի ուշագրավ հուշարձաններից է նաև հինավուրց կամուրջը Կուր գետի վրա, որի կառուցումը վերաբերուած է մեր թվագրության սկիզբներին։ Դիբախտաբար այս հետաքրքիր կառուցվածքը այժմ մատչելի չէ հետազոտության համար, որովհետև նրա մնացորդները ծածկվեցին Կուրի ջրերով, հիբրովայանի ամբարտակի կառուցման հետևանքով։

\*\*\*

Որքան էլ արժեքավոր լինեն հիշատակված հուշարձանները և հատկապես Զվարիի տաճարը, որը հանդիսանուած է վրացական փեղալական ճարտարապետության առաջին ծաղկման (որը ինչպես և Հայաստանում տեղի է ունեցել Ե—է. դ. դ.) գլուխգործոցը, այնուամենայնիվ Մշխիթայի ոյխավոր սրբությունը համարվել է Սվետի յիշովելի (Կենարար սյուն) Մայր Տաճարը։

Համաձայն պատումական աղբյուրների, առաջին գրիտոննեական եկեղեցին այստեղ կառուցված է եղել դեռևս Եղարտում, Քարթի թագավոր՝ Վախտանգ Ա. Գորգասալի (Գայլագլսի) ժամանակի ենթադրում է, որ

<sup>1</sup> «Դիրք թղթոց», Թիֆլիս, 1901 թ., էջ 164։


այդ առաջին տաճարը բազիլիկատիպ է եղել, ինչպես Թունիսի տաճարը, որը հանդիսանում է վրացական բազիլիկատիպ կառուցվածքների լավագույն ներկայացուցիչը։ Հարտնի է, որ Հայաստանի վաղ քրիստոնեական շրջանի եկեղեցիները նույնական ներկայացված են բազիլիկատիպ կառուցվածքներով, ինչպիսին են Երերութիւնի, Տելորի, Քաստղի, Աշտարակի, Եղվարդի և այլ բազիլիկաները։ Այս հանգամանքը պարզուց կերպով վկայում է այն մասին, որ Հայկական ու վրացական վաղ քրիստոնեական շրջանի ճարտարապետությանները ունեցել են ընդհանուր ակունքներ, ապրել են կազմավորման միատեսակ պրոցես և հանգես են բերել ստեղծագործական սկզբունքների միասնություն։

Մայր Տաճարի այդ հնագույն շինքը հնիքարկել է Հիմնական վերանորոգման վրաց կաթողիկոս Մելքիսեդեկի օրոք 1010—1029 թվականներին։ Համաձայն շինարարական արձանագրության, որ պահպանվել է Տաճարի Հյուսիսային պատին, վերակառուցման աշխատանքները իրականացվել են տաղանդավոր ճարտարապետ Արսուկիսձեի ղեկավարությամբ։

Թեև կատարված վերակառուցումը հիմնովին փոխել է Տաճարի նախնական կոմպոզիցիոն և տարածական մտահղացումը, սակայն հին տաճարի առանձին հատկանիշները որոշակի կերպով պահպանվել են և արտահայտվել Սվետի ցխովելիի մեջ հասած շենքում։ Այդ մասին են մասնավորապես վկայում հատկագոճի ձգվածությունի արեւելքից արևմուտք, մուլթերի դասավորությունը Տաճարի ներսում, հատկանիշները, պանք անժխտելի կերպով կապվում են նախկին եռանակ (հուանեֆ) բազիլիկի հետ։

Հետագառովներից մեկի՝ Դ. Գորդեևի կարծիքով ճարտարապետ Արսուկիսձեն ձեռնարկելով Տաճարի վերականգնման աշխատանքները, վերացրել է հուանավազիլիկայի ներկրորդ և չորրորդ (հաշված թեմից) զույգ մուլթերը և առաջին ու երրորդ զույգերը ամրացնելով, վեր է ածել նրանց գմբեթակիր մուլթերի։

Հաստանելույս այդ շորս հենարանները իրար են միացվում հզոր կամարներով, առաջացնելով գմբեթատակ քառակուսին, որի անկյուններում տեղավորված առագաստների օգնությամբ կատարվում է անցումը քառակուսի ձևից վեպի գմբեթի թմբուկի շրջանաձև հիմքը։ Այդ հիմքի վրա վեր է խոյանում գմբեթի բարեկապմ և սլացիկ թմբուկը, որը պսակվում է գմբեթի ծածկով սրածայր վեպութիւնում։




Ավետի Ցեմովելի ՏԱՅԱՐԻ ԱՐԵՎԱԿԵԼՅԱՆ ՇԱԿԱՏԸ  
(բան պրոֆ. Ն. Աներովի)

Գմբեթատակ տարածությունից դեպի արևմուտք գտնվում են զույգ մուլթեր, որոնց միջև հեռավորությունը անհավասար է՝ վերակառուցման հետևանքով։ Տաճարի րիմը, երկու կողերի կրկնահարկ խորաններով գտնվում են զմբեթատակ տարածության արևելյան կողմից և բավականաշատ խորն են։ Դեպի երկրորդ հարկի խորանները բարձրացող աստիճանները տեղավորված են բիմի հարավային պատի հաստության մեջ։ Երկրորդ հարկի խորանները ունեն գեղագիտական առաջարկ և Տաճարի միջին նավի ուղղված բացվածքներ, բաղկացած կամարային զույգ պատուհաններից։ Բիմի և կողքի խորանների բաժանումը արտաքուստ արտահայտված է պատի հաստության մեջ անդավորված խորշերով, որոնք, ինչպես և ներսի կողմից բիմի կիսաշրջան պատի վրա տեղավորված կիսաշրջանաձև խորշերը, շափականց բնու-

բոլ են հայկական և վրացական ճարտարապետության համար:

Տաճարի արևմտյան մասում մուլթերի քայլին համապատասխան, երկայնական պատերի վրա գոյություն ունեն որմնամույթեր, որոնք բավականաշափ դուրս են շեշտված պատերից դեպի կողքերը: Երկայնական պատերի ուղղությամբ, որոնք միացված են խորունկ կամարներով կամ թաղերով, որոնց վրա դրսի կողմից հետ են ընկնում Տաճա-

Տաճարի արտաքին ճարտարապետական ձևերն ու ծավալները թեև վերակառուցումների հետևանքով որոշ չափով կորցրել են իրենց երբեմնի անաղարտությունը, այնուամենայնիվ նույնիսկ այդ վիճակում նրանք հարազատորեն արտահայտում են Վրաստանի հասուն ֆեոդալականության շրջանի (երրոեղի է ունենում վրացական ազգային ճարտարապետության երկրորդ ժաղկումը) բնորոշ հատկանիշները:



ՄՑԽԱԲԻԱՆ ԵՎ ՍՎԵՏԻ ՑԽՈՎԵԼԻ ՏԱԺԱՐԻ ԴԻՏՎԱՇ ԿՈՒՐ ԳԵՏԻ Ա.Ջ Ա.ՓԻՑ

րի արևմտյան մասի երկայնական պատերը, արտաքուատ առաջացնելով լոշիաներ: Արևմտյան ծայրում գոյություն ունի դաս, որի եռակամար բացվածքը ուղղված է դեպի արևելք՝ եկեղեցու բեմը: Տաճարի պատերը ներսից ամբողջովին ծեփված են կրաշաղախով, որոնք պատած էին արժեքավոր որմանկարներով: Դրանք զգալի չափով ավելիված են և չնշին մնացորդներն են պահպանվել:

Թվարկված ճարտարապետական-գեղարվեստական միջոցների շնորհիվ Սվետի ցխովիլի Տաճարի ներքին տարածությունը ընկալվում է միասնական և հանդիսավոր, այն տպավորիչ է կազմակերպվածությամբ և ներդաշնակ համաշափություններով:

Դրանց թվում նախ և առաջ պիտի նշեն Տաճարի ընդհանուր առմամբ վերասլաց համաշափությունները և արտաքին ծավալների ու հարթությունների գեղազարդող մշակման միջոցները: Այդ տեսակետից առանձնապես մնորոշ է արևելյան ճակատը, որն ի դեպ համեմատաբար ավելի անաղարտ է պահպանվել և զերծ է էական աղավաղումներից, ուստի և կարող է լիարժեք պատկերացում տալ Տաճարի նախնական ձևերի ճամասն Արևելյան ճակատի ողջ հարթությունը մշակված է դարաշրջանի համար խիստ բնորոշ ճարտարապետական մոտիվով, որը վրացական նկեղեցական ճարտարապետության մեջ սկսվում է տարածվել ժԱ դարից: Այդ մոտիվը կայանում է պատի հարթության պլա-

տիկական հարուստ մշակման մեջ, ուելյեֆ սյունափնչերի և նրանց վրա հանգող ուղղեթիք կամարադեղների միջոցով։ Դրանք միաւնին պատի հարթության վրա առաջացնում են հինգ դեկորատիվ կամարներ, որոնցից կենտրոնականը առավել լայն է և բարձր մյուսների համեմատությամբ։ Սրա երկու կողմից ավելի փոքր կամարները իրենց մեջ են ամփոփում Տաճարի բնմի և խորանների բաժանումը բնդգրկող ետանկյունի խորշերը, իսկ հաջորդ զույգ կամարները ավելի փոքր են և իրենցով ձևավորում են հարթ պատրը։

Կենտրոնական կամարը և խորշերը պատկող կողքի կամարները ունեն նրբակերտ դրվագներ, որոնք նպաստավոր լուսավորության պայմաններում հնչում են առանձնապես արտահայտիչ կերպով և հարստացնում արեւելյան ճակատը։

Տաճարի հարավային և հյուսիսային ճակատների մշակումը, եթե չհաշվենք վերակառուցումների հետևանքով մտցված փոփոխությունները, ընդհանուր առմամբ ճարտարապետական ամրագություն են կազմում արեւելյանի հետ։

Արևելյան պատի կողմից կցված է մի նախասրահ, որը ներկայացնում է Տաճարի հանդիսավոր մուտքը։ Նախասրահը իր փոքր ծավալով առանձնանում է Տաճարի ընդհանուր ծավալից։

Դարաշրջանի համար բնորոշ է նաև գմբեթի թմրուկն իր ձևերով։ Նրա բազմանիստ ծավալի յուրաքանչյուր նիստի վրա տեղավորված է ավելի ուելյեֆ երեսակալով շրջապատված մեկական երկարավուն պատուհան։

Սվետի ցխովելի Մայր Տաճարի պատմական բախսոր շատ գծերով հիշեցնում է էջմիածնի Մայր Տաճարին։ Նա ևս իր գոյության երկար ժամանակի ընթացքում շատ անգամներ ավերվել ու վերականգնվել է, որպիսի հանգամանքը իր կնիքն է դրել տաճարի կոմպոզիցիոն ու ճարտարապետական ձևերի վրա։ Առաջին լուրջ հարվածը նրան հասել է ժԴ դարում, իննկիմուրի արշավանքների ժամանակ։ Սակայն այդ արհավիրքներից աղատվելուն պիս, արդեն հաջորդ դարում, վրացական Ալեքսանդր թագավորի ժամանակ նա հիմնովին վերանորոգվել է։ Մոտավորապես ժե դարում վերանորոգվել

է Տաճարի ծածկի թաղերի և գմբեթի թրմրուկի մի մասն ու ամրող գմբեթը։ Նշված վերանորոգման աշխատանքների ժամանակ զալի փոփոխություններ է կրել հատկապես Տաճարի արևելյան մասը։

Տաճարի հետևյալ վերանորոգությունը տեղի է ունեցել ժե դարում։ Այն ժամանակ նորից վերակառուցման են ենթարկվել թմրուկը և վեղարը, ինչպես և մի շաբաթ ուրիշ մասերը Անցած դարի կեսին կատարված վերանորոգությունների ժամանակ նոր փոփոխություններ են մտցվել Տաճարի նախական կոմպոդիցի մեջ։ Քանդվել հեռացվել են Տաճարի նախական կոմպոդիցի մեջ հարավային և հարավային կողմից ցցված կիսավեր գավիթները, որոնց տեղի հետքերը հիմա էլ զժվար չէ նկատել հիշատկված պատերի վրա։ Այսպիսին են Մցիսիթայի Սվետի ցխովելի Մայր Տաճարի պատմական և գեղարվեստական արժանիքները, այսպիսին է նրա դարավոր կյանքի փառավոր ուրվագիծը։

Սվետի ցխովելի Տաճարի հաղթական ուրվանկարը այցելողի առաջ բացվում է դեռևս մեծ հեռավորությունից։ Իր հսկայական և բարեգիծ տարածական ձևերով ու հանդիսավոր ծավալներով նա իշխում է ողջ շրջակայի նկատմամբ և կարծես արձագանքելով սարի վրա հաղթ կանգնած ջվարի փոքրիկ ամարին, նրա հետ միասին զարդարում Կուր և Արագի գետերի հովտի համայնականիքները։ Տաճարն իր ընդարձակ բակով և այն սոլոր կողմերից շրջապատող բրդավոր և աշտարակավոր հինավորոց պարիսպներով ընկալվում է որպես միասնական և ներդաշնակ ճարտարապետական ամբողջություն։

Վրաստանի միջնադարյան ճարտարապետությունը հետարարական շրջանում անցնելով զարգացման որոշ նախապատրաստական շրջան, ժԵ դարի առաջին կեսին նշանավորվեց երեք հուշոր կաթողիկեների՝ Բագրատի (Քովայիսիում) Սվետի ցխովելիի (Մցիսիթայում) և Ալավերդու (Կախեթիայում) տաճարների շինարարությամբ։ Այս երեք հոյակապ կառուցվածքները իրենցով մարմնավորեցին վրացական ֆեոդալական ճարտարապետության գերագույն ծաղկումը, լիարժեք կերպով արտահայտեցին քաղաքական, տնտեսական և մշակութային այն հղոր վերելքը, որն ապրեց Վրաստանը պատմական այդ ժամանակաշրջանում։

